կանգնում է եւ բնաւ չէ շարժւում: Ասում էին, ծտերի բերանը աղօթքով կապում է, եւ նրանք չեն կարողանում արտերի ցորեանը ուտել: Ասում էին, դեւերին, սատանաներին բռնում է, լցնում է ապակեայ սրոակների մէջ եւ այնպէս պահում է, որ մարդերին վնաս չտան: — Այսպիսի շատ բաներ խօսում էին նրա մասին, ես բոլորին, բոլորին հաւատում էի: Սկզբում իմ վրայ սարսափ էին բերում այս խօսքերը, բայց յետոյ այնքան ընտելացայ, որ մտածում էի. — «տեր աստուած, ե՞րբ կը լինի, որ ես էլ այդ ամէնը սովորեմ եւ իմաստուն մարդ դառնամ»...

Ինչպէ՞ս չհաւատայի, երբ ամէն օր տեսնում էի նրա տունը լիքն էր հայի, թուրքի, ջհուդի եւ զանազան ազգերի կնիկներով: Որը տէր հօր համար ընծայ էր բերել մի քանի հատ ձու, որը մի աքաղաղ, որը մի շիշ արաղ, որը մի զոյգ գուլպայ, — վերջապէս ոչ մի մարդ դատարկաձեռն ոտք չէր կոխում նրա շեմքի վրայ: Ի՞նչ էր նրանց դարդը: Մէկը չբերք էր. Տէր Հայրը նրա համար մի բան էր գրում, որ երեխայ ունենայ: Միւսի տղամարդը ուրիշին էր սիրում. տէր հայրը իր «վեցհազարեակի» շնորհիւ նրա սէրը սառեցնում էր օտար կնկանից եւ իր կնոջն էր սիրել տալիս: Մէկ ուրիշը ուզում էր մարդի գնալ. տէր հայրը իր «թիլիսմանների» զօրութեամբ նրա բախտը բաց էր անում: — Այսպիսի շատ բաներ անում էր նա, եւ ասում էին, որ բոլորը կատարւում է...

Իր եկեղեցական պաշտօնի մէջ տէր Թոդիկը նոյնպէս իր ժողովրդի թէ հոգեւոր, թէ բարոյական մխիթարութիւնն էր: Ամէն մարդ նայում էր նրան, որպէս մի սրբութեան վրայ: Երբ սկսւում էր մեծ պասը, մեր թաղեցիքը սովորութիւն ունէին կէսաւուր ժամից առաջ հաւաքել եկեղեցու բակում մի խուցի մէջ: Վարժապետս գնում էր այնտեղ, նրանց համար կարդում էր եւ մեկնում էր մի գիրք: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել այն ահագին մեծ գիրքը. նրան կոչում էին «այսմաւուրք»: Նա այնքան ծանր էր, որ հոգիս դուրս էր գալիս մինչեւ տանում էի եկեղեցու խուցը: Թէ ի՞նչ էր գրած նրա մէջ, ես չգիտէի, բայց շատ անգամ գիրքը տանելու ժամանակ մտածում էի. — «ա՜խ, աստուած ջան, ի՜նչ կը լինի, որ այդ գրքի բոլոր գրոածները իմ գլխումը լցնես»: Յետոյ ինձ ու ինձ ծիծաղում էի — «լաւ, ասում էի. իմ պստիկ գլուխը ո՞նց կարող է այս ամէն բաները իր մէջ տանել»: Յետոյ էլի մտածում էի. — «վարժապետիս գլուխը հոյ իմից մեծ չէ, բա՛ ինչո՞ւ նա ամէնը իմանում է»:

Թաղի ծերունիները հաւաքուած էին լինում եկեղեցու խուցի մէջ, սպասում էին տէր հօր գալստեանը: Ես տանում էի գիրքը, դնում էի փոքրիկ գրակալի վրայ, եւ ձեռքերս կուրծքիս վրայ դրած, կանգնում էի այնտեղ: Նա գալիս էր: Ա՜խ, ինչպէ՜ս պատոով ընդունում էին նրան, մարդ չէր մնում, որ սուրբ